Տրինո - էջ 32, «Կաքավիկ» երգարան

- Տրինո.
- Թթու ունե՞ք, Տըրինո,
- Թթու չունենք, Տըրինո,
- Բա ի՞նչ անենք, Տըրինո,
- Բերեք դնենք, Տըրինո,
- Մեջն ի՞նչ դնենք, Տրինո,
- Կաղամբ դնենք, Տըրինո,
- Ծաղկակաղամբ, Տըրինո,
- Գազար բերենք, Տըրինո,
- Էլ ի՞նչ դնենք, Տրինո,
- Կանաչ լոլիկ, Տրինո,
- Բիբար, սխտոր, Տըրինո,
- Կարմիր բազուկ, Տըրինո,
- Նեխուր, սամիթ, Տըրինո,
- Կծու բիբար, Տրինո,
- Էլ ի՞նչ դնենք, Տրինո,
- Կանաչ վարունգ, Տրինո,
- Դափնու տերև, Տրինո…
- Աղը լցնենք, Տրինո,
- Չափով լցնենք, Տրինո,
- Համով ըլնի, Տրինո…

և այլն:

Քարավուզ – նեխուր

1. Հոփ, հոփ, հոփ ըլնի – էջ 22, «Կաքավիկ» երգարան

Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Մեր թթուն համով ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Ծաղկակաղամբ մեջն ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Գլուխ կաղամբ էլ ըլնի,

Հոփ, հոփ, հոփ ըլնի,

Աղը մեջը տեղն ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Կանաչ լոլիկ մեջն ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Նեխուր, բիբար շատ ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Սոխ ու սխտոր մեջն ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Կանաչ վարունգ էլ ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Ամեն բան իր տեղն ըլնի,
Հոփ, հոփ, հոփ ըլնի,
Թթուն խըթխըրթան ըլնի: